

«Հայրապետք Հայոց, աբեք ի սերբաթեան սըսկապա-
նից».

Արեք արտմակալքը յարազուարեն, նորողեցան ձեր հին
արարք.

Եկայ անենք ոզՀայաստանըն խաթարեալ, գիտրդ
կանչնի.

Ուրան լեռուց երկինք, ուրան լեռուց Հայոց սուրբ
Հայրապետք.

Զի հաճեցաւ Տէր նոր ծագել ինև զայու լոյս Հայոց
մեծաց».

Երկու դար է Միկիթարի վառած նրագն
Ադրիականի ափերուն վրայ, եղաւ Հայ
ազգի ուղղեցոյն դէպ ի Հայրենիքի վերա-
ծնութիւնը, Հայրենիքի ազատութիւնը - սուր
սրտի մէկ կայծն է որ մամուկի միջոցով
տարածուեցաւ, մեծցաւ, բորբոքեց Հայու-

թեամ սիրտը, որ դիւցավանքար նետուե-
ցաւ ժամանակին համանարակ իրդեմի մէջ,
մարի գրաւական դնելով, սեփական խել-
քով, ուժով ու քաջութեամբ՝ ծեռք թերաւ
կորուսած իրաւունքները, իւր Բնաշխարի
ժառանգութիւնը, իւր ազատութիւնը:

Ու երբ մենք այսօր ժողոված կը տորնա-
խրմենք Միկիթար Սեբատացոյն մա-
հուան տարէդարձը եւ սրտագին ՞կ'ողջու-
ննը Ազատ եւ ամկախ Հայաստանի վե-
րականգնումն, կը խոստովանինք թէ դա
Հայութիւնի մէջ զաւակի,

ԳԱՂԱՓԱՐԻ ՅԱՂԹԱԿԱՆ Է:

ՊԵՂԱՔ ՇԻՐԱԿԱՑ

ՄԻՒԹԱՐ ԱԲԲԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ապրիլ ամսուն 27ը յիշատակի օր մ'է Միսի-
թարեան Միհաբանութեան, վասն զի այդ օրը
իւր հրանալնոր հիմասդիրը Միկիթար Աքքայ
ծնունդ Սեբաստիոյ, իւր մահկանացուն կփերով
կը վերացւէր յանմանութիւնն Այս տարի տօնա-
խրմութիւնը արտասովուր խանգամառութեամբ
աւելի հանդիսաւորութեան երկութ մը կ'առնուր,
անոր համար որ Հայաստան ազատ և անկախ
ինքնազար պետութիւն մը կազմուած էր: Հայ-
ռենիքի վերածնութիւնը՝ հոգեկան քաղաքական,
եղած էր Միկիթարի զաղափարականը, և նա իւր
անձի մէջ և իւր հիմաստ Միհաբանութեան մէջ
զիտցաւ միացնել և բարձրացնել աստուածապաշ-
տութիւն և զիտութիւն: այդ երկու կորովի
թևերով նորու հօգին, նորա Հաստատութիւնը
անկերպաւան ձեր մէջ ստառապու Հայաստանը
կազմակերպեցին և զինեցին կրօնին և զստու-
թեան զէնքերով կաւարի և տգիտութեան դէմ
մարտնչելու: Երկնաւոր իմաստութեան լոյսը,
զիտութեան շահը մատակարարելով Հայաստանի
զաւակաց, անոնք թօթափեցին դարաւոր գունը,
բացին Հայկայ աշուըներն, զգացին քրիստոնէա-
կան պարտաճանաչութիւն և ազգային գիտակ-
ցութիւն, վառեցան կրօնին և հայրենի սիրով,
այն վայրկնենչն սկսաւ Հայրենիքի վերածնունդի
յութիւնը, որ մեծնալով հասակ անելով
սրտէ ի սիրտ, զօրանալով կամքնորու մէջ, բերաւ

կագեց միացուց անհատական ուժերը, և կազմեց
գիւցազուններու գունդ մը որոնք բախնեցին իրենց
կուրծերը բանութեան դէմ, ճակատ առ ճակատ
կուտցան հինաւորց բարբարոսին դէմ, ոտան-
տակ գլորեցին բունակալի գլուխն և անոր սրբն
վրայ շշտակի կամքնեցին յաղթութեան և ազա-
տութեան որոշն:

Անա թէ ինչն էր որ խանդավառել էր Աստու-
ծոյ և Հայաստանի համար անձնազոհ նահատակը
որու սուրբ հոգին երկնիքի բարձունքն իջած կը
սաւառնէր իւր հիմարկած Տան որմերու մէջ,
որու վրայ կը ծածաննէր Հայաստանի եռափայլ
եռախորուրդ կարմիր կանաչ կապոյան Հայոց:

Ըստ սովորութեան Միկիթար Աքքայի ծրա-
գրած զեղեցկանական Գրատան մէջ, համարուեր էին
Միհաբանները և Մուրատ-Ռափայլէլեն Վարժա-
րանի Աւանանդներն և Աշակերտները Անդի-
սաւարհին խորհրդաւոր լուռթիւնը ընդհանուեց,
նոր ընծայարանի փոքրագոյն աշակերտներէն Տէր
էլ Զօրի անապաններու մէջ կասանուած մանուկնե-
րէն մին եռանդուն ննչին ձանոնդ ապտասաններով
Հ: Ալշանի նուազներէն «Հայցուածք Միկիթա-
րայ» ոստանաւորը, որով որբացեալ սրտի մը
անուն վստահութիւնը կը ներշնչէ առ Թագուհին
Երկնիքին մայրեկն ամենչն քաղցրը, ամենչն
բարեզութք: Ցեսոյ երկու Միհաբաններ համա-
պօտակի պատկերնեցին Միկիթարայ դէմքը. մէկը

բացատրեց թէ ինչպէս Միխիթարը Նախախնամութիւնն կուած էր լուսաւորէլու իւր ազգը, նա բարձրելոյն ձեռքին մէջ, նպատակայարժմար գործիք մ'եղաւ վերակերպելու մէջ ամբողջ ժողովորդ, բարեփոխելու անոր հոգեկան, մուտքավական և գաղափական աշխարհը:

Եւ հետեւակ Միխիթարի մեծ գործին, այս է որ այսօր Հայաստանի ազատ և յաղթական ժողովուրդը, կենդանի դափնիներու կանաչ ու զէշներով զալարուած անհնաւութեան պահ մը կը բոլորն Միխիթարի անման ճակատին: Երկրորդ բանախոսը կը ծանրանար Միխիթարի հոգաւոյն անդորրութեան վրայ, մինչ մահը կը մօտենար սեւ սոտուերով ծածկելու լուսափայլ աչքերը: Նա Յակով հանապետի պէս օրհնելով իւր որդիքը, հոգով կը ցնծար տեսնալով ապագա Հայաստանի պայծառութիւնը Քահանայական և թագաւորական իշխանութեանց վե-

րակենդանութիւնը: Ապա Բատուայի Ռւսանողական միութիւնն հայրենասիրական զգացումներով գրուատեցին Միծ Մարդը և իրենց սրաի երախտագիտութիւնը յայտնեցին անոր՝ որ Հայոց ազատութեան հիմնադիրն եղաւ:

Չուսկ' Սեծարզոյ Վանահայրը ամփոփելով ճառախօսներու միտքը, ասաց որ իյր Կեդրոնէ մը մեկնած ճառագայթիներ իւրաքանչիւր որ գործակից եղաւ Միխիթար Աբբայի մեծ զամափարի իրազորմանը հայրենիքի վերակազմութեան մէջ ուստի մատթեց որ դարձել Միխիթարի հոգին ապրի ամենքի սրտերու մէջ և նոր թափով երթայ սաւանին այն ամայութիւններու վրայ, որ բացեց անօրէն սուրբ Թուրքին, և այն տեղուանք ընձիւել տայ նոր Հայաստանի համար նոր սերունդի անթարշամ' ծաղիկներ: Հանդիսականաց բուռն ծափահարութեամբ փակուեցաւ գրական հանդէսն:

* * *

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃԻՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃԻՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱՆ Է՝ ՀԵՏԵՒԵԱԱ, ԿԵՐՊՈՎ.

Ա. ԽԱՏԽՍԵԱՆ ՎԱՐԺԱՎԵՄ: — Թէ. ՕՀԱՆՁԱՆԵԱՆ Արտաքին գործոց Նախարար: — ԳԻՒԼԱՆԴԻՎԱՆԵԱՆ՝ Ներքին գործերու Նախարար: — ԹՈՒԹԵՆ՝ ՏԵՐ-ՄԻՆԱՊԵՆ, Պատերազմական Նախարար: — ԶՈՐ. ՀԱՆՎԵՐՏԵԱՆ Օզնական Պարզմին Նախարարի: — Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ Ելեմուտքի Նախարար: — ԱՊՔԱՆԿԱՆ՝ Կրթական Նախարար: — Ս. ՎՐԱՑԵԱՆ Աշխատանքի և Երկրադրութեան Նախարար: — ԱՐՏԱՇԵՒՇ՝ ԶԼԻՆԴԱՐԵԼՈՒ Դատական Նախարար: — (ԴԱՐԴ. ԲԻՆԵԱՆ) Օզն. Դատական Նախարարի: — Թէ. ԲԱՐԱԼԵԱՆ Խնամատարութեան Նախարար: — Ա. ԶԱՄԱԼԵԱՆ Հազորդակցութեանց Նախարար:

ՎՍԵՄԱՇՈՒԹ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԻ Ի Ս. ՂԱԶԱՐ

Աղրիդ ամսի 29. — Երեկոյեան վերջն գնացքով Վինետիկ ժամանեց Հայկական Համբաւակետութեան Խորիդրամնի եւ Պարիզը. Փաստ. Նախագահն Պր. Աւելիս Ամարոննեան, որուն ընդառաջ գնացեր էն կայսրանը Միաբանութեանս կողմէն չորս վարդապետներ եւ Բասուայի Համալսարանի Ռւսանուների խումբը: Երկրորդ օրը Վան. Նախագահն ընկերակցութեամբ իւր ազնուաշուք Տիկնոց եւ Պրոֆ. Պր. Ս. Յակոբեանի հանեցաւ պատուել Սիմեոնի Ովստը իւր ցանկալի այցելութեամբը:

Իսկ Մայիս 6-7. — Շնորհ քերաւ մեզ մօտ նորին 08՛ութիւնն՝ Սահակ Բ. Վեհափատը կամուրջիկոս Տամն Կիլիկիոյ:

Միխիթարեան Միաբանութիւնն կամենալով պատուել իւր թանկագին Թիւրերու այցելութիւնը, անոնց պիտի նույիշ « Բազմավէպ »ի յաջորդ թիւը պատկերապար է նշան սիրոյ եւ խորին յարգանաց: